

2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ
6-ԸՊ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. Արտադրանքի ինքնարժեքում չներառված վերադիր ծախսումները՝

ա) ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում.

բ) ճանաչվում են որպես ծախս արտադրանքի իրացմանը համամասնորեն.

գ) բաշխվում են ժամանակաշրջանի ծախսերի ու պաշարների ինքնարժեքի միջև արտադրական սարքավորումների նորմատիվային հզորությունների հիման վրա.

դ) դուրս են գրվում կազմակերպության չբաշխված շահույթի հաշվին:

2. Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է՝

ա) հարկվող ժամանակավոր տարբերությունների (այսինքն՝ այնպիսի ժամանակավոր տարբերությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են հարկվող գումարների առաջացման), հետագա ժամանակաշրջաններ չտեղափոխվող հարկային վնասների և զեղչերի գծով.

բ) նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների գծով (այսինքն՝ այնպիսի ժամանակավոր տարբերությունները, որոնք ապագա ժամանակաշրջանների հարկվող շահույթը որոշելիս հանգեցնում են նվազեցնող (հանվող) գումարների առաջացման), հետագա ժամանակաշրջաններ տեղափոխվող չօգտագործված հարկային վնասների և զեղչերի գծով.

գ) բյուջե ավել վճարված գումարների (զերավճարների) գծով.

դ) բոլոր ժամանակավոր տարբերությունների գծով:

3. Ե՞րբ պետք է կազմակերպությունը դիտարկի գուղվիլի արժեզրկված լինելը (փոխհատուցվող գումարը)

ա) առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում.

բ) միայն, երբ առկա է գուղվիլի արժեզրկված լինելու հայտանիշ (վկայություն).

գ) միայն, երբ առկա է գուղվիլի արժեզրկված լինելու հայտանիշ (վկայություն), բացի այն դեպքերից, երբ գուղվիլը ամորտիզացվում է 20 տարին գերազանցող ժամանակաշրջանի ընթացքում՝ այդ դեպքում արժեզրկված լինելը (փոխհատուցվող գումարը) դիտարկելով առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում.

դ) միայն երբ առկա է գուղվիլի արժեզրկված լինելու հայտանիշ (վկայություն), բացի այն դեպքերից, երբ գուղվիլը ամորտիզացվում է գծային մեթոդից տարբեր մեթոդով՝ այդ դեպքում արժեզրկված լինելը դիտարկելով առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

4. Հիմնական միջոցների միավորին վերաբերող հետագա ծախսումները կապիտալացնելու կամ ծախս ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս նշված գործոններից որը պետք է հաշվի առնվի

ա) այդ ծախսումների էականությունը.

բ) այդ ծախսումների արժանահավատ չափման կարողությունը.

գ) մաշվածության հաշվարկման վերաբերյալ սկզբնական գնահատումները.

դ) նշված գործոններից ոչ մեկն էլ չպետք է հաշվի առնվի:

5. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մոդելի փոփոխության հետևանքով նախորդ տարիների համեմատ ընթացիկ տարում ավել հաշվարկված ամորտիզացիայի գումարի արտացոլում՝

ա) Դեբետ 741

Կրեդիտ 132.

բ) Դեբետ 714

Կրեդիտ 132.

գ) Դեբետ 341

Կրեդիտ 132:

6. Հիմնական միջոցի՝ որպես գրավ ստացում՝

ա) Դեբետ 944

Կրեդիտ 111.

բ) Դեբետ 916

Կրեդիտ 111.

գ) Դեբետ 916:

7. Հիմնական միջոցների ապատեղակայման ծախսումների համար ստեղծված պահուստների օգտագործում այդ ծախսումների դիմաց՝

ա) Դեբետ 543

Կրեդիտ 714.

բ) Դեբետ 543 (Ընթացիկ պահուստներ՝

Կրեդիտ 721 Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքների (օտարումների) ծախսեր՝

գ) Դեբետ 543

Կրեդիտ 252:

8. ՀՀ հարկային օրենսգրքի 451-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 01.01.2014թ.-ից հետո ձեռքբերված հիմնական միջոցների մաշվածության հաշվառումը պետք է փուլայինից անցում կատարվի գծային եղանակի՝ կատարվելով մաշվածքի վերահաշվարկներ: Նկարագրել, որ դեպքում կարող է կազմակերպությունը ունենա մաշվածքի գծով ծախսագրման կորուստ և ինչպիսի հաշվապահական թղթակցություններ պետք է տրվեն այդ մասով:

Պատասխան՝ Բոլոր այն դեպքերում, երբ փուլային հաշվառումը կատարվել է օրենսդրությամբ սահմանված թույլատրելի չափից պակաս:

Հիմնավորում՝ Օրենսգրքի 121-րդ հոդվածով սահմանված՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով համապատասխան խմբերի ամորտիզացիոն ժամկետների և համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների փաստացի կատարման ժամկետների տարբերությունները համարվում են համապատասխան հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարների հաշվարկման նպատակով ամորտիզացիոն նվազագույն ժամկետներ:

թղթակցությունները կատարվում են 342 հաշվով:

9. Կազմակերպությունը կատարել է ապրանքների ներմուծում ԵԱՏՄ երկրից 10.12.2018թ.-ին, որի մասով ներկայացրել է ներմուծման հարկային հայտարարագիր 29.12.2018թ.-ին և նույն օրը կատարել ներմուծման ԱԱՀ-ի ամբողջական վճարում: 05.01.2019թ.-ին ինքնուրույնաբար հայտնաբերել է, որ 100 հազ. դրամի չափով ԱԱՀ-ն պակաս է ներկայացրել և ԱԱՀ-ի հարկային հայտարարագիրը ճշգրտում է և 10.01.2019թ.-ին վճարում: Տվյալ դեպքում կարո՞ղ է արդյոք ներմուծման ԱԱՀ-ն դեկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով հաշվանցել (Ցանկացած տարբերակի ընտրության պարագայում հիմնավորել):

Ճշգրտումների մասը ենթակա է հաշվանցման հունվար ամսին:

Հիմք` ՀՀ հարկային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի գ. ենթակետի համաձայն` ԵՏՄ միասնական մաքսային օրենսդրությամբ կամ Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների ներմուծման ճշտված հարկային հայտարարագիր ներկայացնելու դեպքում` ներմուծման ճշտված հարկային հայտարարագրի ներկայացման և ԱԱՀ-ի լրացուցիչ գումարների վճարման օրերն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի, իսկ այդ օրերը տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում ներառված լինելու դեպքում` դրանցից վերջինը ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկով` հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի լրացուցիչ գումարի մասով:

ա) այո.

բ) ոչ:

10. ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը ռուսաստանյան (ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ) ԱԶ-ից ստացել է բեռնափոխադրման ծառայություն, ընդ որում` ստացված հաշվարկային փաստաթղթի մեջ եղել է առանձնացում`

Մոսկվա-Բագրատշեն 1000 000 ՀՀ դրամ

Բագրատշեն – Երևան 100 000 ՀՀ դրամ

Ինչպիսիք հարկային պարտավորություններ կարող են առաջանալ և ի՞նչ գումարի չափով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԶ-ն ըստ էության հանդիսանում է ֆիզիկական անձ, ոչ թե իրավաբանական, կարող է առաջանալ ոչ ռեզիդենտի եկամտային հարկի խնդիր, որը կհարկվի Հարկային Օրենսգրքի 150-րդ հոդվածով նախատեսված սանդղակով:

$100\ 000 * 23\% = 23\ 000$:

2018թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ 6-ՐԴ ՓՈՒԼԻ ԽՆԻՐԸ ՊԱՏԱՄԽԱՆԸ

Ա կազմակերպությունը ստեղծվել է 02.03.2018թ.-ին և զբաղվել է բացառապես հանրային սննդի ոլորտի գործունեությամբ, 01.08.2018թ.-ին սահմանված ժամկետում ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկով չնվազեցված և հաջորդող հաշվետու ժամանակահատված տեղափոխված ծախսերի գումարը կազմել է 50 հազ. ՀՀ դրամ: 01.12.2018թ.-ին կազմակերպությանը շրջանառությունը կազմել է 115 մլն ՀՀ դրամ: Կազմակերպությունն աշխատել է 42 տոկոս վերադիրով, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գերազանցել է 115 մլն ՀՀ դրամի շեմը` ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն չի ներկայացրել: Նույն հաշվետու ժամանակաշրջանում

կազմակերպության կողմից դուրս է գրվել 12 հազ. ՀՀ դրամի հարկային հաշիվներ (ներառյալ ԱԱՀ-ն), մանրածախ եղանակով կատարել է մանրածախ եղանակով իրացում 62 000 հազ. ՀՀ դրամի: Նույն հաշվետու ժամանակաշրջանում վրացական ռեզիդենտ ընկերությունից ստացել է 2000 ԱՄՆ դոլարի խորհրդատվական ծառայություն, որի մասով ծառայություն մատուցող կազմակերպությունը դուրս է գրել փաստաթուղթ՝ ծառայության մատուցման ամսաթիվ նշելով 31.12.2018թ.:

Ինչպես նաև ՀՀ տարածքում ստացել է 80 000 հազ. ՀՀ դրամի ապրանքներ և ծառայություններ՝ բոլորը ԱԱՀ-ով և սահմանված կարգով հաստատվել են 19.01.2019թ.-ին: Վրացական կազմակերպության կողմից ստացված 2 000 ԱՄՆ դոլար ծառայության մասով նույն օրը դուրս է գրել մատակարարի անունից հաշիվ, որը ՊԵԿ-ի կողմից հաստատվել է 10.01.2019թ.-ին:

Որոշել 2018թ.-ի ԱԱՀ-ով հարկվող (հաշվանցվող) գումարի չափը:

ՊԱՏԱՄԽԱՆ

1. ՀՕ 254-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող համարվող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը տվյալ հարկային տարվա ընթացքում համարվում են շրջանառության հարկ վճարող անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից, բացառությամբ այն դեպքերի, երբ շրջանառության հարկ վճարող համարվող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը Օրենսգրքի 59-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն:

2. ՀՕ հոդված 425-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հարկային հաշիվների դուրս գրման սահմանափակումների խախտմամբ հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում հարկ վճարողները պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը Օրենսգրքով սահմանված կարգով վճարել պետական բյուջե, եթե դուրս գրված հարկային հաշիվը սահմանված կարգով չեղյալ չի համարվել:

Պատասխան՝ 2000 դրամ վճարման ենթակա, միայն ընդհանուր 12000 դրամի սխալմամբ դուրս գրած հարկային հաշվի մասով: